

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ
ԱՐՏԱՑՈՒՄԸ ՇԱՐԱՅԻ ԱՎԱՆԴԱՋՐՈՒՅՑՈՒՄ

Պատմ. գիտ. թեկնածու Ս. Գ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Շարայի և նրա զարմերի մասին Մովսես Խորենացու բերած ավանդազրույցը ուշագրավ տեղեկություններ է պարունակում Շիրակի և Հյուսիսարևելյան Հայաստանի հարևան շրջանների հնագույն պատմության առանձին հարցերի պարզաբանման տեսանկյունից: Նրանում առկա ցեղաբանական-ժազումնաբանական բնույթի տվյալները վաղուց են գրավել հայագետների ուշադրությունը¹: Այս հոդվածում փորձ է արվում բացահայտելու և վերլուծելու ավանդազրույցի արդեն այն տվյալները, որոնք նույն տարածքի վերաբերյալ Ստրաբոնի և Հերոդոտի ավանդած ցեղանվանական տվյալների հետ միասին հետևանք են դեռևս նախաուրարտական ժամանակներից վերահիշյալ շրջանների տնտեսության առաջատար ճյուղը հանդիսացած հացազդիների մշակության:

* * *

Ամենից առաջ բերենք ավանդազրույցի այն պատահիկը, որի աղբյուր հացազգիների մշակության հետ ակնբախ է հենց առաջին հայացքից. «Եւ [Արամայիսը] զորդի իւր զՇարայ, զյուլվածին եւ զշատակեւ, առաքէ ամենայն աղիսի իւրով ի դաշտ մի մօտաւոր, արգաւանդ եւ բերրի, յորում զնան ջուրք ոչ սակաւք, ի թիկունս հիւսիսոյ լերինն, որ անուանեցաւ Արագած, յորոց անուն եւ զգաւառն ասէն անուանեալ Շիրակ: Վասն որոյ թո՛ւի արդարանալ առասպելին, որ ասի ի մէջ գեղջկաց. «Թէ քո Շարայի որկորն է՝ ասէն, մեք Շիրակայ ամբարքն չեն»²:

Նիքակ տեղանունը Շարա անձնանունից բխեցնող Խորենացու բերած տեսակետը ժողովրդական ստուգաբանության արդյունք է: Գր. Ղափանցյանը գիտականորեն հիմնավորեց Նարա (=Շար-ա-յ) անվան ժազումնաբանական փոխադարձ կապը ոչ թե Շիրակ, այլ *Աշարունիք (>Արշարունիք) տեղանվան հետ³: Արշարունիք գավառը, որը տարածվում էր Շիրակի և Արաքս գետի

¹ К. Патканов, Ванские надписи и значение их для истории Передней Азии, СПб., 1881, стр. 111—112; Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, Ереван, 1971, стр. 424—425, пр. 3; Г. А. Капанцян, Историко-лингвистические работы, т. II, Ереван, 1975, стр. 118—123. Հ. Մանանդյան, Հին Հայաստանի և Անդրկովկասի մի քանի պրոբլեմների մասին, Երևան, 1944, էջ 29—40 (վերջին ուսումնասիրությունները տե՛ս Ս. Գ. Պետրոսյան, Թրակա-կիմերական ցեղերի միությունները հայկական լեռնաշխարհում (մ. թ. ա. VI—V դդ.), «Պատմա-բանասիրական հանդես», 1977, № 1, էջ 207—220: Նույն ժամանակահատվածում «Շարայի ցեղամիությունը» Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելքում (մ. թ. ա. VI—V դդ.), ՀՍՍՀ ԳԱ «Արաբեր հաս. գիտ.» 1979, № 12, էջ 65—75):

² Խորենացի, Ա, Ժբ (այստեղ և հետագայում ընդգծումները մերն են—Ս. Պ.):

³ Աշարունի տոհմական հիմքում ընկած աշար (ա-շար) բառի մեջ առկա առաջին ա-ն ճախահավելվածական ձայնավոր է (տե՛ս Г. А. Капанцян, նշվ. աշխ., էջ 121):

միջև, հիմնականում ընդգրկելով Ախուրյանի աջափնյակը, վաղ միջնադարում Շիրակից առանձին վարչական միավոր էր⁴, սակայն ավելի հին ժամանակներում նրա հետ միասին կազմում էր մեկ ամբողջություն (Կամսարական տոհմի ավագը կոչվում էր «Շիրակայ եւ Աշարունեաց տէր»)։ Շիրակ-ի հիմքում Շառա անունը տեսնելով հանդերձ, հորենացին Արշարունի-ն էլ բխեցնում էր Կամսարական Արշավիր իշխանի (IV դար) անունից⁵։ Սա անհավանական է, նախ, այն պատճառով, որ վերջին տեղանվան ավելի հին ձևը եղել է ոչ թե Արշարունի, այլ «Աշարունի» (= Ա-շար-ունի-ք), ապա՝ «...Արշաիր անունէն հարկ էր, որ Արշարունի անունէն» (հմմտ. Արշարաւ, Արշարաւ, Արշարեան ավանդված ձևերը)⁶, վերջապես՝ «...Արշարունեաց Արշաիր իշխանը... Արշարունի ցեղէ չէր, այլ Կամսարական տոհմէ»⁷։

Ավելի ուշ Արշարունի գավառը մեր մատենագրությանը հայտնի է դառնում Աշոբնի⁸ (կամ Աշոբնի)⁹ անվամբ։ Այս անվանաձևի մեջ ևս, ինչպես տեսնում ենք, բացակայում է առաջին վանկի հավելյալ ր-ն։ Շառա անձնանվան և Աշարունի (= Ա-շար-ունի) տոհմանվան նման Աշոբնի (= Ա-շոբ-նի-ք) տեղանվան մեջ ևս առկա է նույն աշարա (>ա-շար-) կամ աշոբա (>ա-շոբ-) բառը¹⁰, որի մեջ առաջին ա-ն դարձյալ նախահավելվածական ձայնավոր է (հմմտ. այս նույն բառի դարաբաղյան շա՛րա արտասանությունը)։ Աշարա կամ աշոբա ասելով այժմ հասկանում են տարեկանը՝ հացազգիների ընտանիքի պատկանող այն միամյա բույսը, որը մշակվում է Հայաստանի լեռնային շրջանների սահմանափակ տարածություններում, աշնանացան ցորենի համեմատությամբ ավելի վաղահաս է, ցրտադիմացկուն, երաշտադիմացկուն և հողի նկատմամբ պահանջկոտ չէ¹²։ Սակայն քանի որ տարեկանը ցորենի ու գարու համեմատությամբ ավելի երիտասարդ կուլտուրա է, ուստի և «...այն նշելու համար հարմարեցվել են թաղանթավոր ցորենների (հաճարի և սպելտայի) անվանումները»¹³։ Ըստ այսմ, աշարա-ն կամ աշոբա-ն Հայաստանում գործ է ածվել որպես հումանիշ թե՛ հաճար, թե՛ տարեկան, թե՛ ցորեն բառերի։ Այսպես, օրինակ, եթե Հայաստանի շատ շրջաններում աշարա ասե-

4 Ս. Տ. Երևմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 40 և բար-տեղը։

5 Г. А. Капанцян, նշվ. աշխ., էջ 121։

6 Խորենացի, Բ, ղ։

7 Հ. Հիւրշման, Հին Հայոց տեղույ անունները, Թարգմ. Հ. Բ. Պիլեղիկճեան, Վրենա, 1907, էջ 314։

8 նույն տեղում։

9 «Ի գաւառն Աշոբնի... ի գեղն, որ ասի Կաղեղուան» (Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 269), «Ի ձորն Աշոբնեաց յամուրն Կապուտ կոչեցեալ» («Ստեփաննոսի Սինեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական», Մոսկվա, 1861, էջ 139)։

10 Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 56։

11 Աշարա=աշոբա համապատասխանության համար հմմտ. ինչպես Աշարունի=Աշոբնի(f) զույգը, այնպես էլ առու=առոգ(ել)=ռոգ(ել) շարքը՝ n-ից առաջ ա>n (կամ n>ա) անցումով։

12 «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 1, Երևան, 1974, էջ 488։

13 П. А. Гандилян, К. С. Марджанян, Лингвистические и другие данные о древности пшеницы и родственных культур в Армении, «Պատմա-բանասիրական հանդես», 1979, № 2, էջ 229։

լով հասկանում էին հաճարը, ապա Ղարաբաղում շարա, կոռիում աշարա կոչվում էր միայն տարեկանը, իսկ Վանի բարբառով աշարա նշանակում էր «նոր ցորեն» (քաղաքում) կամ «ցորենի նոր ծլած բույսը» (շրջակա գյուղերում)¹⁴:

Այսպիսով, Աշարունի տոհմանվան, Արշարունի (<*Աշարունիք) և Աշունի (<*Աշորունիք) տեղանունների նման Շարա անձնանվան հիմքում ևս ընկած պետք է լինի հայերեն աշարա (ա-շարա) կամ աշարա (ա-շորա) բառը՝ «տարեկան», «հաճար», «ցորեն» իմաստներից որևէ մեկով (հնարավոր է, նույնիսկ, «ցորենագգի բույս» ընդհանրական իմաստով): Ուրեմն, Շարայի շատակերություն մասին ավանդությունը, որը պետք է հիմնված լիներ Շարա անվան և պարսկերեն շարա ۰ شەر «որկրամուլ» բառի նմանահնչունության վրա¹⁵, կյանքի էր կոչվել միայն հետագայում՝ ծագումով իրանցի Կամսարականների Շիրակ—Արշարունիքում հաստատվելուց հետո, այսինքն՝ ոչ շուտ, քան մ. թ. III դարը: Շարա անձնանվան հիմքում պարսկերեն համապատասխան բառը տեսնող տեսակետը փաստորեն մերժելով, Հ. Աճառյանը գրում էր. «(Շարայ) դնում են պրս. šara «շատակեր» բառից¹⁶. բայց այս դեպքում սպասելի էր հայ. Գարակ¹⁷, որովհետև «Հայտնի է, որ a (e)-ով վերջացող ժամանակակից պարսկերեն մի շարք բառեր պահպանելով, ինչպես նաև նրանից փոխ առնված հայերեն բառերում ունեն ակ վերջավորությունը. օրինակ, պարսկ. dība<պահլավ. dīpāk=հյ. դիպակ, պարսկ. nama<պահլավ. namak=հյ. ցամակ, պարսկ. kurra<պահլավ. kurak=հյ. քուռակ, պարսկ. fireshta<պահլավ. freshtak=հյ. հրեշտակ և այլն»¹⁸:

Ասվածներից ելնելով կարելի է ենթադրել, որ ավանդազրույցի Շարան իրենից ներկայացնում է հետագա բանահյուսական զարգացումը Շիրակ—Արշարունիքի հնագույն բնակիչների հացահատիկի անձնավորում աստվածության: Իսկ որ Հայկական լեռնաշխարհի այս մասում պետք է անպայման հացահատիկի պաշտամունք գոյություն ունենար, վկայում է Ախուրյանի ավազանի տնտեսության մեջ ուրարտական ժամանակաշրջանում հացահատիկի մշակության ունեցած բացառիկ առաջատար դերը: Պատահական չէ, որ ամբողջ լեռնաշխարհի մասշտաբներով «Կարսի մարզում հացահատիկի իր հարուստ շտեմարաններով աչքի էր ընկնում Աշտուխինին, իսկ նրանից արևելք, պատմական Շիրակում՝ էրիախին»¹⁹: Պատահական չէ նաև այն հանգամանքը, որ իրենց հաղթական արշավանքները նկարագրող արձանագրություններում ուրարտական թագավորները ավերի ու ավարի մատնված հացահատիկի շտե-

14 Հ. ր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. Ա, Երևան, 1971, էջ 216: Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հ. Ա, Երևան, 1944, էջ 198:

15 Մովսես Խորենացի, Հայոց պատմություն. թարգմանություն, ներածություն և ծանոթագրություններ Ստ. Մալխասյանի, Երևան, 1940, էջ 266, ծան. 48:

16 Արդի պարսկերենի ۰ شەر գրությունը մի դեպքում արտացոլում է šāh արտասանությունը՝ նշանակելով «ազահություն, անհագություն, ընչաքաղցություն» և «կիրք, տենչ, բաղձանք», մյուս դեպքում՝ sareh արտասանությունը՝ նշանակելով «ազահ, անհագ, ծարավի» (տե՛ս Персидско-русский словарь, т. II, М., 1970, стр. 100):

17 Հ. ր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Դ, Երևան, 1948, էջ 150:

18 Բ. Չուգապյան, Բառաբանական դիտողություններ, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. դիտ.» 1981, № 2, էջ 32:

19 «Հայ ժողովրդի պատմություն», հ. 1, Երևան, 1971, էջ 364:

մարանների մասին հիշատակում են միայն Աշտուփսի (Վանանդ) և էրիախի (Շիրակ) երկրների նվաճման կապակցությամբ²⁰։ Հացահատիկի անձնավորում այս Շարա աստվածության անունով էլ Շիրակ—Արշարունիքի և հարակից շրջանների հնագույն բնակիչները կոչվել են *šarap-ներ (Ստրաբոնը այս ցեղանունը բերում է Σαρπαρως տեսքով)²¹, այսինքն՝ «Շարաթին»-ներ կամ «Շարայի դարմ»-եր²²։

Միաժամանակ պետք է ենթադրել, որ Շիրակ—Արշարունիքի հնագույն բնակիչները որպես աշարա (աշորա) հացահատիկի մշակությամբ զբաղվող հողագործներ տնտեսամշակութային այլ կացութաձև ունեցող իրենց հարևաններից տարբերվելու համար կոչվել են *աշար-ունի-ք կամ *աշոր-(ու)նի-ք²³։ Սրանցից առաջինն ընկած է Աշարունի տոհմական և *Աշարունիք (>Արշարունիք) տեղանվան, իսկ երկրորդը՝ Աշորնիք (Աշորնիք) տեղանվան հիմքում²⁴։ Այսպիսի ենթադրության հավանականության օգտին է խոսում աշխարհի տարբեր մասերից և տարբեր աղբյուրների միջոցով մեղ հասած բազմաթիվ նույնիմաստ ցեղանունների գոյության փաստը։ Ինչպես Յ. Վ. Չեսնովն է նշում. «Ջարգացած նոր քարի դարում և վաղ մետաղի դարաշրջանում ցեղային նոր խմբավորումները ստեղծում են ըստ տնտեսամշակութային տեսակների իրենց տարանջատվածությունն արտացոլող ինքնանվանումներ... Այդ ժամանակաշրջանում են առաջանում «հերկող, վարող, հողագործ»-ներ նշանակող բազմաթիվ ցեղանունները»²⁵։

* * *

Շարայի և նրա զարմերի մասին գոյություն ունեցած ավանդազրույցի մեղ հասած պատառիկները որոշակի գաղափար են տալիս նաև «Շարայի ցեղամիության» (այսինքն՝ սարապարների զխավորած ցեղերի միություն) զբաղեցրած տարածության մասին, որովհետև նրա (և առհասարակ բոլոր պատմական ավանդազրույցների) աշխարհագրությունը պայմանավորված է այդ

²⁰ Н. В. Арутюнян, Земледелие и скотоводство Урарту, Ереван, 1964, стр. 74—75.

²¹ Strabo, XI, 14, 14.

²² Ավելի մանրամասն տե՛ս Ս. Գ. Պետրոսյան, Թրակա-կիմերական ցեղերի միությունների Հայկական լեռնաշխարհում (մ. թ. ա. VI—V դդ.), էջ 211—212։

²³ Նույնպիսի մի իմաստ է պարունակելու հնագույն Վանանդի ուրարտական արձանագրություններում տրված Aštuhini անունը (Н. В. Арутюнян, նույն տեղում, էջ 74—75)։ Վերջինիս հիմքում ընկած asl(u) արմատը առկա է նաև ուրարտ. օժիւ «հաց» և հայ. աշտուն (աստուն) «շոր հաց, ցամաք հաց» բառերում։ Ուրարտ. և հայ. այս բառերի անշուրթունքների վերաբերյալ տե՛ս Գ. Դ. Ղափանցյան, Ուրարտուի պատմությունը, Երևան, 1940, էջ 56։ Ի գեպ, հայերեն բառը բաղկացած է աշտ- (աստ-) արմատից և -ուն վերջածանցից (հմմտ. պարսկ և պարսկուն, բրդ-ել և բրդուն, դառն և դառնուն և այլն. տե՛ս Գ. Դ. Ղափանցյան, Հայոց լեզվի պատմություն. Հին շրջան, Երևան, 1961, էջ 214)։

²⁴ Եթե Աշորնիք-ը *Աշարունիքի ձևից չի ծագում, ապա -ունի- բաղադրիչի փոխարեն նրա մեղ առկա է -նի- ցեղանվանակերտը (հմմտ. արմենի<Արմէ, գեղնի<Գեղ, Սիւնի<Սեւնի <*սեւ)։

²⁵ Я. В. Чеснов, О социальной мотивированности древних этнонимов, «Этнонимы», Сб. Института этнографии им. Н. Н. Миклухо-Маклая АН СССР, М., 1970, стр. 48—49.

աշխարհագրության մեջ ուրվագծվող տարածքում վարչացենտրոնին ինչ-որ միավորի երեքմանի գոյությունը²⁶։ Նախ, բերենք այդ ուշագրավ պատահականները։

1) «Եւ [Արամայիսը] զորդի իւր Շարայ, զյոլովածին եւ զշատակեր, առաքէ ամենայն աղիսի իւրով ի դաշտ մի մօտաւոր, արգաւանդ եւ բերրի, յորում գնան ջուրք ոչ սակաւք, ի թիկունս հիւսիսոյ լերինն, որ անուանեցաւ Արագած, յորոյ անուն եւ զգաւառն ասեն անուանեալ Շիրակ»²⁷։

2) «Իսկ Գուշարայ, որ որդւոցն Շարայի, ժառանգեաց զլեւոն Մթին, որ է Կանգարբ, եւ զէս մասինն Զաւախաց, զԿողբ, զԾոբ, զՁոր, մինչեւ ցամուրն Հնարակերտ»²⁸։

3) «Բայց զտէրութիւնն Աշոցայ, եւ զսեպհականութիւնն Տաշրաց կարգէ Վաղարշակ [արքան] եւ զաւակացն Գուշարայ Հայկազնոյ»²⁹։

Խորենացուն հասած այս տեղեկություններից ելնելով, Շարային եւ նրա զարմերին կարող ենք համարել մինչև հայ ժողովրդի (որպես միասնական-միատարր էթնոսի) վերջնական ձևավորումը Հայաստանի այս նույն կողմերում իշխած սարապար ցեղի եւ նրա գլխավորած ցեղամիության մեջ ընդգրկված տեղական մյուս ցեղերի էպոնիմ-նախնիները՝ նրանց բանահյուսական անձնավորումները։ Հենց այդ ցեղերի տոհմացենտրոնի ավագանու ներկայացուցիչներից պետք է սերած լինեին Շարայի զարմերը համարված հին հայկական նախարարական այն տոհմերը, որոնք իշխում էին Մեծ Հայքի Շիրակ, Արշարունիք, Աշոցք, Տաշիր, Զավախք, Կանգարք, Կողբ (Կողբոփոր), Ծոբ (Ծոբոփոր), Ձոր (Ձորոփոր) գավառներում եւ վերջիններիցս արևելք, «մինչև ցամուրն Հնարակերտ» ձգվող Կուրի աջափնյա շրջանում։

Նշված շրջաններից բացի «Շարայի զարմերը» բնակվելու էին նաև նախիջևանի երկրամասում։ Նրանց նախիջևանյան հատվածի գոյության մասին է խոսում Շարուր գավառի անվան ստուգաբանությունը։ Վերջինիս կապակցությունը Գր. Ղափանցյանը գրում է. «Կասկած չկա, որ Šar(a) էթնիկական անվանումից է կաղմված հայկական Շարուր, Šarur գավառի անունը ևս... Ašaruni(kh) գավառի Šarur դաշտից ունեցած որոշ հեռավորություն չի կարող արգելք հանդիսանալ այսպիսի մեկնաբանության համար, որովհետև մինչևույն ցեղի ճյուղերը հեշտությամբ կարող էին տարաբնակվել և հեռանալ»³⁰։ Շարուր (<*Շարոյր<*Շար-ոյր) տեղանվան ստուգաբանությունից բացի «Շարայի զարմերի» նախիջևանյան հատվածի գոյության մասին է խոսում այն փաստը ևս, որ Ստրաբոնը սարապարներին (այսինքն՝ նույն «Շարայի զարմերին») համարում էր հարևանը ինչպես մեդացիների, այնպես էլ գուրանիացիների³¹։ Հայտնի է, որ սրանցից մեդացիները (մարերը) բնակ-

²⁶ Վարչացենտրոնի այդպիսի միավորների վերաբերյալ դարեդար գոյատևող հիշողությունները չէին խաթարվում շեռհիվ բոլոր ժողովուրդների նախազրային ժամանակաշրջաններին բնորոշ այնպիսի մի երևույթ, ինչպիսին հայրենի ավանդությունների անաղարտ ժառանգումն ու սերունդներին անփոփոխ (ինհարկե, երկու դեպքում էլ համեմատաբար) ժառանգություն թողնելն էր։

²⁷ Խ ո Ր Ե Ն Ա Յ Ի, Ա, Ժբ։

²⁸ Նույն տեղում, Բ, Ը։

²⁹ Նույն տեղում։

³⁰ Г. А. Капанцян, նշվ. աշխ., էջ 122։

³¹ Strabo, XI, 14, 14.

վում էին անդրարաքսյան շրջաններում, իսկ գուրանիացիները տեղադրվում են այժմյան Զանգեզուրում³²։ Բացառված չէ, որ «Շարայի ցեղամիության» մեջ ընդգրկված է եղել նաև Արարատյան դաշտի բնակչությունը, քանի որ դաշտն ինքը տարածված էր Շիրակ—Արշարունիք և Շարուր—Նախիջևանի, այսինքն՝ Շարայի զարմերով (սարապարներով) բնակեցված արաքսամերձ երկու շրջանների միջև։ Այս առթիվ ուշագրավ է նաև այն փաստը, որ հին հայկական ավանդազրույցներում մի կողմից Շարան՝ Շիրակ—Արշարունիքի էպոնիմ-անվանադիրն ու նրա բնակչության էպոնիմ-նախնին, իսկ մյուս կողմից Ամասիան՝ Մասիս սարի էպոնիմ-անվանադիրն ու, հավանաբար, մասիսամերձ շրջանների (Մասեացոտն գավառի³³) բնակչության էպոնիմ-նախնին համարվում են Արամայիսի որդիները, այսինքն՝ հարազատ եղբայրներ³⁴։

Եթե, իսկապես, «Շարայի զարմերի» (սարապարների) գլխավորած ցեղամիության մեջ ընդգրկված է եղել նաև Արարատյան դաշտի բնակչությունը, ապա դուրս է գալիս, որ նրա տարածքը փոխված է եղել Կողքիսից (Կոլխիդա) Մարաստան (Մեդիա) տանող այն ճանապարհի շուրջ, որն անցնում էր Զավախք—Աշոցք—Շիրակ—Արարատյան դաշտ—Շարուր—Նախիջևան ուղղությամբ, կազմելով Մեոտիս-Կողքիսյան կոչված մեծ ճանապարհի շարունակությունը³⁵։

Ասվածներից հետո կարող է զարմանալի թվալ, որ Հերոդոտը (ծնվ. մ. թ. ա. 490—480 թթ. միջև, մեռ. 430—424 թթ. միջև) իր ժամանակ այդ նույն ճանապարհի շուրջ տարածված շրջանների բնակչությանը կոչում է ոչ թե սարապարներ, այսինքն՝ «Շարայի զարմեր», այլ սասպեյրներ (Σάσπειροι, Σάσπειροι)։ Ստորև բերում ենք սասպեյրների վերաբերյալ Հերոդոտի հաղորդած տեղեկությունները.

1) «Մատիեններից, սասպեյրներից և ալարոդներից սահմանված էր [վերցնել հարկ] երկու հարյուր տաղանդ, այս տասնևութերորդ շրջանն է»³⁶։

2) «Մեոտիս լճից մինչև Փասիս գետը և Կողքիսը լավ գնացողի համար երեսուն օրվա ճանապարհ է, իսկ Կողքիսից շատ չէ անցքը դեպի Մեդական երկիրը։ Այս երկու երկրների միջև մի ժողովուրդ է գտնվում՝ սասպեյրները, և, այստեղից անցնելուց հետո, կարելի է հասնել Մեդական երկիրը»³⁷։

3) «Այս տեղերում դեպի սասպեյրների կողմը Մեդական երկիրը խիստ լեռնոտ ու բարձր է և ծածկված է ծառերով ու անտառներով, իսկ Մեդական երկրի մյուս մասը ամբողջ հարթ է»³⁸։

³² Հ. Կարազյոզյան, Արևելյան Հայաստանի ուրարտական տեղանունները, ՀՍՍՀ ԳԱ «Արաբեր հաս. գիտ.», 1978, № 10, էջ 66։

³³ Խորենացի, Ա, Ժբ. Հմմտ. Ա-մասի-ա և Մասի-ս (>սեո. Մասեաց)։ Ամասիա անվան առաջին ա-ն նախահավելվածական ձայնավոր է։

³⁴ Հ. Մանանդյան, Հին Հայաստանի և Անդրկովկասի մի քանի պորթլեմների մասին, էջ 35, 66։ Նույնի՝ Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները ըստ Պևտինգերյան բարտեզի, Երևան, 1936, էջ 117—135։

³⁵ Herod., III, 94 (տե՛ս Հ. Մանանդյան, Հին Հայաստանի և Անդրկովկասի մի քանի պորթլեմների մասին, էջ 25)։

³⁶ Herod., I, 104 (տե՛ս նույն տեղում, էջ 24)։

³⁷ Herod., I, 110 (տե՛ս նույն տեղում, էջ 25)։

4) «Պարսիկները բնակվում են, տարածվելով մինչև հարավային ծովը, որն անվանվում է էրիթրյան (խոսքը Պարսից ծոցի մասին է—Ս. Պ.), սրանցից վերև դեպի հյուսիս ապրում են մեղացիները, մեղացիներից վերև սասպեյրները, իսկ սասպեյրներից վերև կոլիսերը, որոնք տարածվում են մինչև հյուսիսային ծովը (խոսքը Սև ծովի մասին է—Ս. Պ.), որի մեջ է թափվում Փասիս գետը: Այս շորս ժողովուրդները ապրում են ծովից մինչև ծով»³⁸:

Հենվելով Հերոդոտի հաղորդած այս տեղեկությունների վրա, Հ. Մանանդյանը, իրավամբ, գտնում էր, որ սասպեյրները բնակվել են Կողքիսի և Մարաստանի միջև՝ վերոհիշյալ Ջավախք—Աշոցք—Շիրակ—Արարատյան դաշտ—Շարուր—Նախիջևան ճանապարհի շուրջ³⁹: Սասպեյրների այսպիսի տեղադրությունն ընդունում է նաև Ի. Մ. Դյակոնովը, որի կարծիքով, սասպեյրները բնակվում էին Անդրկովկասում, ուրարտական արձանագրությունների էթիոնի երկրի տարածքում⁴⁰: Ի դեպ, այս վերջինն ընդգրկում էր այն բոլոր մասեր ցեղային երկրները, որոնք տարածվում էին այժմյան Սարիղամիշի (արևմուտքից) և Սևանա լճի ավազանի (արևելքից) միջև⁴¹: Մոտավորապես նույն կարծիքն ունի նաև Գ. Ա. Մելիքիշվիլին, սասպեյրներին տեղադրելով հարավային Վրաստանից մինչև Արաքսի վերին ու միջին հոսանքները ձգվող շրջաններում⁴²:

Սասպեյրներին տեղադրելով հիմնականում հարավային Վրաստանից մինչև Արաքսի վերին ու միջին հոսանքները ձգվող շրջաններում, նույն Գ. Ա. Մելիքիշվիլին, միևնույն ժամանակ, նրանց է տրամադրում նաև Ճորոխի ավազանը⁴³: Այս դեպքում նա տուրք է տալիս Հերոդոտի սասպեյրներին Քսենոփոնի հեսպերիտների (Ἑσπερίται, -ων)⁴⁴, այսինքն՝ Սպերի հին բնակիչների հետ նույնացնող այն սխալ տեսակետին. որի հիմքը մի կողմից Սպեր տեղանվան և հեսպերիտ ցեղանվան, իսկ մյուս կողմից սասպեյր ցեղանվան կարծեցյալ նույնությունն է⁴⁵: Կովկասագիտության մեջ լայն տարածում գտած այս տեսակետը հիմնավորել հնարավոր չէ հետևյալ պատճառներով:

Ա) Սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկությունները բացառում են հեսպերիտներին և սասպեյրների նույնացման հնարավորությունը: Ինչպես վերևում տեսանք, Հերոդոտը սասպեյրներին մատիենների ու ալարոդիների հետ

³⁸ Herod., IV, 37 (տե՛ս նույն տեղում, էջ 24):

³⁹ Հ. Մանանդյան, Հին Հայաստանի և Անդրկովկասի..., էջ 25:

⁴⁰ И. М. Дьяконов, Предыстория армянского народа, Ереван, 1968, стр. 192, 240.

⁴¹ Н. В. Арутюнян, Бияйнили (Урарту), Ереван, 1970, стр. 212, 429.

⁴² Г. А. Меликишвили, К истории древней Грузии, Тбилиси, 1959, стр. 232. Սասպեյրների տեղադրության հարցը հայագիտության, կովկասագիտության և արևելագիտության մեջ ուրիշ մեկնաբանություններ էլ է ստացել, բայց հոգվածի սեղմության պատճառով ստորև կանդրադառնանք դրանցից շրջանառության մեջ ամենից շատ եղողին միայն:

⁴³ Նույն տեղում:

⁴⁴ Xen., Anab., VII, VIII, 25 (տե՛ս Քսենոփոն, Անաբասիս, Թարգմանությունը Միմոն Կրկյաշարյանի, Երևան, 1970, էջ 197):

⁴⁵ Н. Ю. Ломоури, Возникновение древнеберийского (картлийского) государства, «Проблемы античной культуры», Тбилиси, 1975, стр. 486, 492—493.

միասին տեղադրում էր Աքեմենյան տերության XVIII սատրապության մեջ⁴⁶, երբ Հայտնի է, որ Ճորոխի վերին հոսանքի շրջանը բռնած հետագա Սպերի տարածքը մտնում էր ոչ թե նրա, այլ հարևան XIII («արմենական») սատրապության մեջ: Դա երևում է նախ նրանից, որ «Արևմտյան Արմենիայի» հյուսիսարևոս Տիրիբազը⁴⁷ տիրակալն էր նաև փասիանների ու հեսպերիտների⁴⁸, ապա նրանից, որ Սպերի բնակիչները (= *sper-it-ներ, 'Εσπεριται) հետագայում կոչվում էին նաև արմենոխալուբներ (Armenochalybes)⁴⁹, այսինքն՝ «արմեն-խալուբներ» կամ «արմենական խալուբներ»:

Բ) Սասպեյրները Սպերում բնակվել չէին կարող նաև այն պատճառով, որ սրանք հարևաններն էին նաև մատիենների՝ նրանց և ալարոդիների հետ միասին մտնելով միևնույն XVIII սատրապության մեջ: Վերջին հանգամանքը պարզվում է նրանից, որ սասպեյրները հիշատակվում են այդ երկու ցեղախմբերի միջև՝ մատիեններից հետո և ալարոդիներից առաջ, այսինքն՝ հարևանությամբ թե՛ մեկ, թե՛ մյուս ցեղախմբի: Հերոդոտի հաղորդումներից ելնելով⁵⁰, հայազետների և արևելազետների մեծ մասը, իրավամբ, XVIII սատրապության մատիեններին տեղադրում է Կապուտան (Ուրմիտ) լճի ավազանում⁵¹: Գոյություն ունի մեկ ուրիշ կարծիք ևս, ըստ որի սասպեյրների հարևան մատիեններին փնտրելու ենք Արաքսի վերին հոսանքի շրջանում⁵²: Այս կարծիքի դեմ է խոսում նախ այն իրողությունը, որ Արաքսի վերին հոսանքի շրջանը հետագա Մեծ Հայքի Մարդաղի և Բասեան գավառներով ժամանակին մտնում էր ոչ թե XVIII, այլ XIII («արմենական») սատրապության մեջ⁵³: Ապա, այս կարծիքի համար հիմք ծառայած Հերոդոտի այն հաղորդումը, թե Արաքս գետը սկիզբ է առնում մատիենների երկրում⁵⁴, իրականում վերաբերում է ոչ թե նրանին, այլ Կապուտան լիճը թափվող Արասին⁵⁵: Ոչ միայն Հերոդոտը, այլև «որոշ անտիկ հեղինակներ այս Արասի-Արախսը շփոթում են նրախ-Արախսի հետ»⁵⁶: Քանի որ XVIII սատրապության մատիենները բնակ-

⁴⁶ Herod., 3, 94.

⁴⁷ Xen., Anab. IV, 4 (տե՛ս Քսենոփոն, Անաբասիս, էջ 93):

⁴⁸ Xen., Anab., VII, VIII, 25 (տե՛ս նույն տեղում, էջ 197):

⁴⁹ Plin., Nat. Hist., VI, 11 (տե՛ս Հ. Մանանդյան, Հին Հայաստանի և Անդրկովկասի... էջ 12): Ս. Տ. Երեմյան, Հայաստանը հիլլենիստական ժամանակաշրջանում (մ. թ. ա. III—I դդ.), «Հայկական ՍՍՌ ատլաս», Երևան—Մոսկվա, 1961, էջ 103:

⁵⁰ Herod., I, 189; V, 49; V, 52.

⁵¹ Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Ա, Երևան, 1944, էջ 57: Ս. Տ. Երեմյան, Հայաստանը և Փոքր Ասիան ըստ Քսենոփոնի «Անաբասիս-ի» (Քսենոփոն, Անաբասիս, էջ 240—241-ի ներդիր քարտեզը): Մ. Մ. Дьяконов, История Мидии, М.—Л., 1956, էջ 226:

⁵² Н. В. Хазарадзе, К вопросу о локализации матиенов в свете древнегреческих источников VI—V вв. до н. э., «Математико-географический журнал», 1973, № 2, էջ 201, 209:

⁵³ Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 44, 65 և քարտեզը: Սրանք բնակիչներին՝ մարդերին ու փասիաններին Քսենոփոնը հիշատակում է որպես արմեններից կախյալ կամ նրանց ենթակա ցեղեր (Xen., Anab., IV, III, 4 և VII, VIII, 197):

⁵⁴ Herod., I, 202.

⁵⁵ Геродот, История в девяти книгах, перевод и примечания Г. А. Стратановского, Л., 1972, стр. 508, пр. 148.

⁵⁶ Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 39: Ի դեպ, Հերոդոտի այս հաղորդման մեջ շփոթված են մի քանի նույնանուն գետեր, որոնց թվում նաև միջինասիական Արաքսը (Геродот, История в девяти книгах, էջ 508, ծան. 150):

վում էին ոչ թե Արաքսի վերին հոսանքի շրջանում, այլ Կապուտան լճի ավազանում, ուստի նրանց հարևան սասպեյրները կարող էին բնակված լինել ոչ թե Սպերում (և ընդհանրապես, Ճորոխի ավազանում), այլ Կապուտանի ավազանին հյուսիսից հարող շրջաններում, այսինքն՝ դարձյալ Թավրիզ—Նախճավան—Շարուր—Արարատյան դաշտ—Շիրակ—Աշոցք—Ջավախք—Սամցխե ճանապարհի շուրջ։ Հակառակ դեպքում, մատիեններն ու սասպեյրները հարևաններ չէին լինի, որովհետև միմյանցից բաժանված կլինեին Ճորոխի և Կապուտանի ավազանների միջև ձգված շրջաններով։

Գ) Սասպեյր—Սպեր մերձեցմանը (և, հետևաբար, սասպեյրներին դրա հիման վրա Սպերում բնակեցնող տեսակետին) դեմ է խոսում հենց ինքը՝ այդ բառերի ազգակցությունը հիմնավորելու կոչված մոտեցումը։ Հերոդոտի ավանդած սասպեյր-ը տեղանուն չէ, որպեսզի կարողանանք այն սրոհել վրացերենի սա- տեղանվանակերտ նախածանցի (հմմտ. Սա-մցե «Մեսսիսի», Սա-ֆարսվելո «Վրաստան», Սա-փուսնգ-եթի «Ֆրանսիա» և այլն) և չեղյալ-սպեյր ցեղանվան, իսկ վերջինս էլ բխեցնենք Սպեր-ից, որն իր հերթին տեղանուն է, ոչ թե ցեղանուն։ Ընդ որում, վրացերեն այս նախածանցով կարելի է միայն ցեղանունից տեղանուն կերտել, հակառակը՝ երբեք։

Դ) Սասպեյր—Սպեր մերձեցմանը դեմ է խոսում նաև Սպեր տեղանվան ստուգաբանությունը։ Հայտնի է, որ Սպեր էր կոչվում հետագա Մեծ Հայքի այն գավառը, որտեղ Ճորոխ գետը գծելով իր նշանավոր աղեղը՝ շրջադարձից հետո հոսում է իր նախնական ընթացքին ճիշտ հակառակ ուղղությամբ⁵⁷։ Ըստ այսմ, մեր տեղանվան հիմքում պետք է տեսնել հ.-ե. **(s)per*—(«ոլորել, պտտել», «պարուրել, գրկել») արմատը։ Սպեր տեղանվանը (երկրանվանը) հատկապես մոտ են հունարեն σπεῖρα («գալար, աղեղ, ոլորան») և լատիներեն *spīra* («պարույր, գալար») նույնածագում բառերը⁵⁸, իսկ Սպերի հին բնակիչների 'Εσπερίται և նման անվանումները նույն տեղանունից կազմված **Sper-it* ցեղանվան (ավելի ճիշտ՝ էթնիկոնի) հունական իմաստավորված կամ աղավաղված-հարմարեցված ձևերն են⁵⁹։ Տեղանուններից -it մասնիկով կազմված ցեղանուն-էթնիկոններ են առկա Սպերի հարևան շրջաններից հայտնի հետևյալ երկրանուններում. Καρχηνίτις (<**Karēn-it*, հմմտ. Կարի6), 'Εσπερίχη (<**Egr-it*, հմմտ. Եգր), Խաղտոյ ձոր (<**խաղ-իտ-ոյ*=*ուրարա*. *Halitu*), Ջիդրիտք (<**Ջիդր-իտ-ք*)։

Վերոշարադրյալը թույլ է տալիս պնդելու, որ կոլխերի և մարերի միջև հիշատակված սասպեյրները իրականում բնակվել են Կողքիսից Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան շրջանների վրայով Մարաստան տանող հիշյալ ճանապարհի շուրջ՝ Սամցխեի կողմերում սահմանակցելով կոլխերի (արևմտավրացական ցեղերի), իսկ նախիջևան—Թավրիզ շրջանում՝ մարերի (մեղացիների) հետ։ Նշանակում է, սասպեյրներն ու սարապարների («Շարա-յի գարմերի») բնակությունը շրջանները լրիվ համընկնում են։ Այստեղից էլ՝

⁵⁷ Ս. Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 81 և քարտեզը։

⁵⁸ «Древнегреческо-русский словарь», т. II, М., 1958, стр. 1493, «Латинско-русский словарь», М., 1976, стр. 947.

⁵⁹ 'Εσπερίται ձևը կարող էր երևան գալ միայն հունական դիցաբանության ազդեցությամբ (հմմտ. աշխարհի ծայր արևմուտքում բնակված դիցուհի քույրերի 'Εσπεριόες և նրանց երկրի 'Εσπερίτις անվանումները)։

երկու ցեղախմբերի նույնացման հնարավորությունը, հոգուտ որի է խոսում նաև նրանց ցեղանունների իմաստային փոխկապվածությունը՝ խարսխված հացաղգիների մշակության և պաշտամունքի վրա:

* * *

Ավելի վաղ մենք նշել էինք, որ Տարապարաց ցեղանունը ներկայացնում է հունական տառադարձությունը տեղական շարապար-ի, որովհետև հին հունարենը շ շուներ և փոխառյալ բառերի այդ հնչյունը վերարտադրում էր իր ս-ի միջոցով: Ցեղանվան առաջին՝ Տարա- բաղադրիչը նույն Շարա(յ) անձնանունն է, իսկ երկրորդ -պար(ազ) բաղադրիչը պետք է ծագած լինի կամ հ.-հ. *per-«ծնել» արմատից (հմմտ. լատիներեն pario «ծնել», parens «ծնող» բառերը և թրակյան Παρις, Παρος, Ziparus անձնանունները)⁶⁰, կամ հ.-հ. *puer «տղա, որդի» բառից (հմմտ. լատին. puer «երեխա, տղա, որդի» և դակերեն per «տղա, որդի»)⁶¹: Ըստ այսմ, շարապար > Տարապար նշանակելու է «Շարայածին» կամ «Շարայի զարմ» (հմմտ. Հայկ և Հայկազն, Արամ և Արամազենայի): Միևնույն ժամանակ, իմաստային փոխկապվածությունը գոյություն ունի ինչպես Շարա—Տարապարաց, այնպես էլ Նարա—աշարա («հացահատիկի ինչ-որ տեսակ») գոյգերի միջև: Այդ փոխկապվածության հայտնաբերումով հնարավոր է դառնում կռահել մի կողմից Շարայի էությունը որպես հացահատիկի աստվածություն, մյուս կողմից այն կարևոր դերը, որ սարապարների («Շարայի զարմերի») կյանքում խաղացել են հացահատիկի մշակությունն ու պաշտամունքը:

Այս նույն ոլորտից է գալիս նաև սասպեյր (Σάσπειρες) ցեղանունը⁶², որը մեր կարծիքով, պետք է տրոհել Σασ- և -πειρ(ες) բաղադրիչների, սրանցից երկրորդը նույնացնելով Σαρᾶπαρος ցեղանվան երկրորդ բաղադրիչի հետ (-πειρ < *per- «ծին, ծնունդ» կամ *puer «զարմ, որդի»): Ինչ վերաբերում է ցեղանվան առաջին՝ Σασ- բաղադրիչին, ապա, պետք է կարծել, որ այն համածագում է հին հնդկերեն sasyā «ցանք, հացահատիկ» և ավեստյան hahya «արմտիք» (հմմտ. paitiš-hahya «հնձոց տոն»)⁶³ բառերի հետ: Այս դեպ-

⁶⁰ Д. Дечев, Характеристика на тракийския език, София, 1952, стр. 40. Գ. Բ. Ջահուկյան, Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, Երևան, 1970, էջ 56:

⁶¹ В. И. Георгиев, Исследования по сравнительно-историческому языкознанию, М., 1958, стр. 122, 128.

⁶² Ի դեպ, սասպեյր ցեղանունը ծագումնաբանական որևէ առնչություն չունի նաև "Ιβηր ("Ιβηρος, "Ιβηρες > Iberes, Iberi) ցեղանվան հետ: Վերջինիս փոխառում հնագույն հայերենի *իվեր ձևի (որից էլ՝ վիր-f) հիմքում ընկած է հ.-հ. *seu-er «ձախ, հյուսիս» բառը (հ.-հ. *seu-er > *իվեր, *իվիր հմմտ. հ.-հ. *seu-r-իւր > յուր. տե՛ս Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. Բ, Երևան, 1973, էջ 251, 253—254): Ժիշտ նույնպիսի մի մտածողությամբ է երևան եկել նաև կապուտանամբձ Զարաանդ (ուրարտ. Zaranda) գավառի անունը՝ «հարավի երկիր» իմաստով (Զարաանդ < *զ-հարա-անդ, հմմտ. մի կողմից՝ գաու < *գհաու, զարկ < *գհարկ, զով < *գհով և այլն, մյուս կողմից՝ Հարաանդ, Մանանդ, Վանանդ և այլն):

⁶³ Հ. Բ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. Գ, Երևան, 1977, էջ 64:

քում ցեղանունն ընկալելու ենք «Հացահատիկի ծնունդներ» կամ «Հացահատիկի զարմեր» իմաստով (ընդունելով հանդերձ, որ գործ ունենք ոչ թե առարկայական հացահատիկի, այլ նրա անձնավորում աստվածության՝ Շարա՞հ հետ)։

Պատահական չէ, որ նախկին սասպեյրական ցեղամիության հիմնական տարածքը հին հայերի մոտ կրում էր մի անուն՝ Այրաբատ, որը նույնպես գալիս է այն նույն ոլորտից և խարսխվում այն նույն հողագործական մշակույթի վրա, ինչ Շարա անձնանուն-գիցանունը, Աշարունի տոհմանուն-ցեղանունը և Σαρῶ-αυας ու Σάσι-ειρες ցեղանունները։ Մեր ժողովրդի հնագույն պատմությունը շարադրած խորհնացին և Անանունը (անշուշտ, Մար Աբասի հետևություններ) հակված են Այրաբատ երկրանունը բխեցնելու դիցաբանական Արայի (գրբ. Արայ) անունից⁶⁴։ Այսպիսի զուգորդումը, եթե անգամ պատմական հիմք չունի (սա ծայրահեղ դեպքում), ապա, համենայն դեպս, ցույց է տալիս, որ Այրաբատ երկրանվան նախաձևը ունեցել է *Արայրատ տեսքը։ Արայ և *Արայրատ > Այրաբատ (ըստ երևույթին, այր «տղամարդ», այր «մարդ», այր «քարայր» և *այր «կրակ» բառերից որևէ մեկի ազդեցությամբ)։

Վերականգնված Արայրատ ձևը այժմ հեշտությամբ կարող ենք տրոհել արայր- և -աա բաղադրիչների։ Սրանցից երկրորդը տեղանվանակերտ մասնիկ է (հմմտ. Որթուատ, Շաղատ, Հաղբատ, Տամբատ և այլն)՝ սերած հայերենի -աա վերջածանցից (հմմտ. բացատ, խրամատ, խորխորատ և այլն)։ Ինչ վերաբերում է տեղանվան առաջին արայր բաղադրիչին, ապա, մեր կարծիքով, այն ծագումնաբանական սերտ կապի մեջ է հայերեն արօր < արաւր բառի հետ։ Վերջինս արմատական բառ չէ և բաղկացած է արա-(>հ.-ե. *arə- «վարել, հերկել») արմատից ու -ւր վերջածանցից⁶⁵։ Այս վերջածանցը սերում է հ.-ե. նախալեզվում գործիքների անվանումներ կազմող -tro մասնիկից, որն ուներ գործող անձ ցույց տվող իր -ter տարբերակը⁶⁶։ Այս -ter-ը հայերենում օրինաչափորեն վերածվելու էր -յր-ի, որովհետև հ.-ե. t-ն r-ից առաջ որպես կանոն հայերենում տալիս է լ (հ.-ե. -tr > -ւր), իսկ ձայնավորից առաջ՝ յ (հ.-ե. -ter > -յր)⁶⁷։ Ուրեմն, արաւր «վարող, հերկող» է նշանակում իրի առումով, իսկ *արայր «վարող, հերկող» է նշանակում անձի առումով։ Վերջինս արդեն իր զուգահեռներն ունի ոչ միայն հունարենում (ἀροτήρ) և լատիներենում (arator), այլև հ.-ե. ուրիշ մի շարք լեզուներում (հմմտ. խեթ. harātar, կիմր. arddwr, aradr, կորն. aradar, միջին բրետ. arazr, միջին իռլ. arathar, հին իսլ. ardr, սերբախորվ. pārap և այլն)⁶⁸։ Սակայն հայկական *արայր-ը՝ որպես հ.-ե. arə- արմատից կազմված և անձի առումով կի-

⁶⁴ Խորհնացի, Ա, ժե, Ա, ժգ։ Անանուն, գլ. Ա (տե՛ս «Սերէոսի եպիսկոպոսի պատմություն», Երևան, 1939, էջ 6, 7)։

⁶⁵ Մեր արաւր-ի հետ միասին հ.-ե. *aratrom նախաձևից են սերում նաև հունարեն ἄρατρον և լատիներեն arātrum բառերը (տե՛ս Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. III, Երևան, 1957, էջ 113)։

⁶⁶ Նույն տեղում։

⁶⁷ Հմմտ. մայր < *matē'r, բայց մար < *matros, հայր < *pātē'r, բայց հար < *pātros-.

⁶⁸ В. Н. Топоров, Прусский язык. Словарь, А—Д, М., 1975, стр. 107.

րառված բառ⁶⁹, կարելի է նույն շարքում դասել ոչ միայն աղգակից լեզուների վերոհիշյալ բառերի, այլև հին իրանցիների և հին հնդիկների *arya* = *ariya* ինքնանվանումների հետ: Ըստ երևույթին, այս *արայր-ը ժամանակին եղել է հին հնդագործ հայերի այրարատյան հատվածի ինքնանվանումը. ճիշտ այնպես, ինչպես համաժառույտ *arya*—*ariya*-ն նախապես ինքնանվանումն էր հին իրանցիների և հին հնդիկների առանձին հատվածների⁷⁰: Այս ենթադրության ճշմարտացիության օգտին է խոսում նրանց երկրի կրած Այրա-րառ (<*Արայրատ < *արայր-ատ) անունը՝ «հնդագործի երկիր» ընդհանուր իմաստով (հմտ. *arya* > *Aryana* > *Eran* > *Iran*):

Այրարատ երկրանվան «հնդագործի երկիր» ստուգաբանության ճշմարտացիության օգտին են վկայում Մեծ և Փոքր Արարատների (ալ-Հարիթ և ալ-Հուվայրիթ) վերաբերյալ արաբ մատենագիրների հաղորդումները: Յակուտ ալ-Համավին նրանց մասին գրում է. «Արմինիայի մեջ երկու լեռներ են, որոնց վրա են գտնվում Հայաստանի թագավորների շիրմները իրենց դանձերով: Ասում են, թե Պլինիոս իմաստունը կախարդել է այդ լեռները՝ որպեսզի մարդիկ չկարողանան բարձրանալ վերև: Մադայինին ասում է, որ Հարիսը և Հուվայրիթը, որոնք Դվինի մոտ են գտնվում, իրենց անունն ստացել են Հուվայրիթ իբն Օկբայից և Հարիթ իբն Ամրուից, որոնք Սալման իբն Ռաբիայի հետ Հայաստան են եկել...»⁷¹: Այս ավանդության մեջ պատմական Սալման զորավարի հետ հիշատակված անձինք մտացածին են: Ինչպես Հ. Թ. Նալբանդյանն է գրում. «Յակուտի մեկնաբանությունը թեև պարզված է նախիստամական դարում ապրող Հարիթ անունը կրող մի արաբացու անունից, որը իբր պնտեղ բնակություն է հաստատել»⁷²: Մեծ ու Փոքր Արարատները (Մասիսները) այդ նույն անուններով են կոչում նաև Մուկադասին և Աբու-լ-Ֆիդան⁷³:

Մեծ Արարատին տրված ալ-Հարիթ (արաբ. *أَلْأَرْضُ*) անունը նշանակում է «մշակի, երկրագործի (լեռ)»⁷⁴: Նույնն է նշանակելու նաև Փոքր Արարատին տրված ալ-Հուվայրիթ (արաբ. *أَلْأَرْضُ*) անունը, քանի որ դրանց երկուսի հիմքում էլ ընկած է արաբերեն *أَرْض* «վարել, հերկել» արմատը (սրանից էլ *أَرْض* «հնդագործ» բառը): Անտարակույս, ի դեմս ալ-Հարիթ անվան մենք գործ ունենք հայկական լեռան հայերեն *Արայր-ատ > Այ-

69 Հավանաբար, սրա մի վերապրուկն է ներկայացնում այսօր էլ ժողովրդախոսակցական չեզոք գործածական արա կոշական բառը:

70 Հին իրանցիների սուրբ գիրքը՝ Ավեստան, հաստատում է, որ արայ-ն ուներ հստակ դրսևորվող հնդագործական բնույթ՝ միավորելով ոչ թե բոլոր զրադաշտականներին, այլ նրանցից միայն նստակյացներին (տե՛ս М. М. Дьяконов, Очерк истории древнего Ирана, М., 1961, стр. 66; Г. Б. Акопов, Основной принцип классификации народов древнеиранской историко-эпической традиции, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», IV, Երևան, 1969, էջ 138):

71 «Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», կազմեց Հ. Թ. Նալբանդյան, Երևան, 1965, էջ 51:

72 Նույն տեղում, էջ 154, ծան. 138:

73 Նույն տեղում, էջ 155: А. Н. Тер-Гевондян, Армения и Арабский халифат, Ереван, 1977, стр. 261.

74 «Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», էջ 154, ծան. 138:

բարատ (>Արարատ՝ Աստվածաշնչի ազդեցությամբ) անվան արաբներին թարգմանության հետ⁷⁵։ Ճիշտ նույն կերպ Ազատ գետի հովտին արաբների կողմից տրված ալ-Ահրար *الاحرار* անունը արաբներին թարգմանությունն է դետի հայերեն Ազատ անվան (արաբներին *احرار* «ազատ») ⁷⁶։ Նշանակում է, Արարատ < *Արայր-ատ տեղանվան «հողագործի երկիր» ստուգաբանությունը հաստատվում է համապատասխան լեռնանվան արաբներին (ջաբալ) ալ-Հարիթ՝ «հողագործի (լեռ)» թարգմանության միջոցով⁷⁷։ Իսկ սա ցույց է տալիս, որ, իսկապես, հին հայերի այրարատյան հատվածի (Արարատյան դաշտում, Շիրակ—Արշարունիքում և սրանց հարակից շրջաններում) նախնիները ժամանակին կոչվել են *արայր «վարող, հերկող», այսինքն՝ «հողագործ»։ Հիշենք հայերի ֆրլա (<արաբ. *فرلا* «հողագործ») անվանումը՝ տրված քոչվոր ոչխարապահ քրդերի կողմից։

Այսպիսով, *արայր-ը պատկանում է պատմաաշխարհագրական և մշակութատնտեսական այն նույն ոլորտին, ինչ որ Շարա անձնանուն-գիցանունը, Աշարունի տոհմանուն-ցեղանունը և Σαρᾶστος ու Σάσπειρος ցեղանունները։ Այս առթիվ տեղին ենք համարում մեջ բերել Վ. Ա. Նիկոնովի գրած հետևյալ տողերը. «Ստուգաբանությունների մեծամասնության անհավաստիությունը՝ դրանց առանձնակի դիտման պտուղն է։ Ցեղանվան ծագումը չի կարելի հասկանալ այն շարքից դուրս, որի մեջ նա առաջացել է»⁷⁸։ Ավելացնենք նաև, որ ըստ Յա. Վ. Չեսնովի. «...տնտեսական մասնագիտացում արտացոլող ցեղանունները ծագում են ոչ թե առանձնակի, այլ որպես հակադրություն տնտեսական-մշակութային ուրիշ նշանակություն ունեցող ցեղանվան»⁷⁹։ Ընդ որում, այդպիսի հակադրություն գոյություն ունի ոչ միայն տարբեր տնտեսամշակութային (ասենք, նստակյաց հողագործական և քոչվոր անասնապահական) ոլորտներում ծագած ցեղանունների, այլև դրանցից յուրաքանչյուրի ներսում ծագած ցեղանունների միջև։ Օրինակ, «արորային հողագործներ» իմաստով ցեղանունները կարող էին ծագել որպես հակադրություն «բրիչային հողագործներ» նշանակությամբ ցեղանունների, չնայած դրանք երկուսն էլ խառըսկվում էին միևնույն տնտեսամշակութային հիմքի՝ հողագործության վրա⁸⁰։

Յա. Վ. Չեսնովի վերջին դիտողությունները ելակետ դարձնելով, կարելի է փորձ անել ստուգաբանելու ալարոդի (*Ἀλαροδοί*)⁸¹ ցեղանունը՝ որպես

⁷⁵ Մասիսը նաև Արարատ է կոչվել ոչ միայն աստվածաշնչային Արարատ լեռան (այժմ՝ Ջուղի) մասին պատմված առասպելը նրան վերագրելու, այլև (ամենից առաջ) Մասիսամերձ շրջանի կրած Այրարատ անվան շնորհիվ։

⁷⁶ А. Н. Тер-Гевондян, *նշվ. աշխ.*, էջ 42։

⁷⁷ Ինչ վերաբերում է Ուրարտու և Այրարատ անունների միջև ծագումնաբանական սերտ կապ տեսնող տեսակետին, ապա պետք է ասել, որ այն դեռ լուրջ հիմնավորման կարիք է դրում։

⁷⁸ В. А. Никонов, *Этнонимия, «Этнонимы», стр. 25.*

⁷⁹ Я. В. Чеснов, *նշվ. աշխ.*, էջ 49։

⁸⁰ Նույն տեղում, էջ 49։

⁸¹ Herod., III, 94; VII, 79. Ալարոդիները, մեր կարծիքով, բնակվում էին սասսանյաններից արևելք՝ կազմելով բնակչությունը՝ «Գեղամի (մերձսևանյան) ցեղամիության» (վերջինիս վերաբերյալ տե՛ս Ս. Գ. Պետրոսյան, Մերձսևանյան ցեղերի միությունը Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելքում (մ. թ. ա. VI—V դդ.), «Պատմա-բանասիրական հանդես», 1976, № 1, էջ 187—197)։

մի բևեռը այն հակադրամիասնության, որի մյուս կողմում գտնվում էր սաս-պեյր (կամ *արալր) ցեղանունը: Մեր կարծիքով, 'Αλαροδο(οι) ցեղանունը պետք է բաժանել հետևյալ բաղադրիչների. al-aro-di: Սրանցից վերջինը՝ -di-ն ցեղանվանակերտ վերջածանց է՝ հայերենի օրինաչափությամբ վերածված -տի-ի (հմմտ. հաղտիֆ < խաղտիֆ < խաղտի-ֆ, իսկ խաղտի < խաղ-տի)⁸²: Ըստ երևույթին, այս ցեղանվանակերտը նույնական է հայերենի -տի հավաքականակերտի հետ (հմմտ. մանկտի, ծակտի, փորոտի-ֆ, բոլորտի-ֆ և այլն)⁸³: Ցեղանվան երկրորդ բաղադրիչը՝ -aro-ն պետք է նույնը լինի հ.-ե. վերոհիշյալ *arə- («վարել, հերկել») արմատի հետ, իսկ առաջին բաղադրիչը՝ al-ը, հավանաբար, նույնական է հ.-ե. ծագմամբ հայերեն այլ բառի հետ (հմմտ. նաև համածագում և նույնիմաստ հունարեն αλαός բառը)⁸⁴: Ցեղանվան ընդհանուր իմաստը լինելու է «ուրիշ (տեսակի) հողագործներ», կամ, գուցե թե, «ուրիշ (ցեղի) հողագործներ»: Ուրեմն, պետք է ենթադրել, որ այն ալարոդիների ինքնանվանումը (բուն ցեղանունը) չէ և նրանց տրվել է հարե-վան սասպեյրական ցեղամիության բնակչության կողմից⁸⁵:

Այս երկու ցեղանունները՝ Σάσπειρες և 'Αλαροδοι, մեկը մյուսին հակադրվելով հանդերձ, կազմում էին մեկ միասնություն և, ամենայն հավանականությամբ, որպես այդպիսին (նաև առանձին-առանձին վերցրած) հակադրվում էին արդեն տնտեսամշակութային ուրիշ՝ քոչվոր անասնապահական ոլորտից եկող այնպիսի մի ցեղանվան, ինչպիսին էր սատիան-ը (Ματιανοί) կամ մատիեն-ը (Ματιγνοί): Կապուտան լճի ավազանը բռնած մատիենական ցեղամիությունը⁸⁶, ինչպես վերևում նշվեց, սասպեյրական և ալարոդիական ցեղամիությունների հետ միասին կազմում էր վարչական մեկ միավոր՝ XVIII սատրապությունը⁸⁷: Այս մատիանների ցեղանունն ունեցել է իր *Ματιανοί տարբերակը՝ պահպանված նրանց անվամբ հայտնի Կապուտան լճի Ստրաբոնի հաղորդած Ματιανῶν անվան մեջ⁸⁸: Սա հնարավորություն է տալիս Ματιανοί ցեղանունը նույնացնելու հ.-ե. *mendl-ana «հեծյալ» բառի հետ (հմմտ. թրակյան հեծյալ աստծու Μεζηναι և մեսապյան-իլիրական Յուպիտերի Menzana մականունները)⁸⁹, որի հիմքում ընկած է հ.-ե. *mend(i) «ծի» բառը (հմմտ. ալբաներեն mes, mezi և թրակերենից փոխառյալ ռումիներեն minz «հովատակ» բառերը)⁹⁰: Այս ստուգաբանության օգտին է խոսում այն հանգամանքը, որ դեռևս ուրարտական ժամանակներից

⁸² Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, Ереван, 1971, стр. 58—59.

⁸³ Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. III, էջ 529—530:

⁸⁴ Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. Ա, էջ 168:

⁸⁵ Հմմտ. հայերին տրված վրացերեն սոմեխի անունը, որով հայերը հայտնի են նաև օսերին, կամ հին վրացիներին տրված հայերեն վիրֆ (< *վիր-բ) անունը, որով վրացիները հայտնի էին նաև հույներին:

⁸⁶ Herod., I, 189; V, 49; V, 52.

⁸⁷ Herod., III, 94.

⁸⁸ Strabo, XI, 13, 2.

⁸⁹ В. И. Георгиев, նշվ. աշխ., էջ 117:

⁹⁰ Նույն տեղում, էջ 127:

կապուտանամերձ շրջանները հայտնի էին որպես ձիաբուծության նշանավոր կենտրոններ՝ իրենց անհամար երամականերով⁹¹։ Տեղական «Սուբի նահանգի բնակիչներն իրենց նմանը չունենին ձիեր վարժեցնելու արվեստի մեջ։ Ցեղական մտորակները, որ պահվում էին թագավորական բանակի համար, նախ ուղարկվում էին Սուբի նահանգը՝ վարժեցնելու»⁹²։

Սասպեյր և Կալադի գեղանունների նման հակադրամիասնության մեջ էին լինելու նաև մատիեն և ուխի (ուտի) գեղանունները, որոնք որպես քոչվոր անասնապահական գեղերի անվանումներ հակադրվելու էին առաջիններին՝ նստակյաց հողագործական գեղերի անվանումներին։ Ուխիները (Օյու-ու), որոնք նախապես բնակվում էին հայերին, աղվաններին և մարերին հարևան մերձկասպյան գեղերի միջավայրում⁹³, հետագայում թափանցել էին Կուրի աջափնյա հարթավայրը և իրենց անունը թողել Մեծ Հայքի Ուտիք նահանգի վրա⁹⁴։ Ըստ երևույթի, մատիեն և ուխի գեղանունները հակադրամիասնության մեջ էին առաջինը որպես ձիաբուծ քոչվորներին, իսկ երկրորդը՝ ոչխարապահ քոչվորներին նշող անվանումներ։ Մեր կարծիքով, Օյու(ու) գեղանվան առաջին՝ *ou- բաղադրիչը հ.-հ. *oui- «ոչխար» բառն է՝ պահպանված նաև հայերեն հովիւ (<*հովի-ի<հ.-հ. *oui- «ոչխար»+pa- «արածեցնել»), հին հնդկերեն avī, հունարեն οἰς, լատիներեն ovīs, լիտվերեն ovīs, լատիշերեն avs, ռուսերեն овца, հին բարձր գերմաներեն ouwi, լուսիներեն hau-, հիբրոգլիֆ խեթերեն haua- բառերում (հայերեն բառից բացի, մյուս բոլորը «ոչխար» են նշանակում)⁹⁵։ Ինչ վերաբերում է *oui-ti- գեղանվան երկրորդ՝ -ti բաղադրիչին, ապա այն հին հայերենի վերոհիշյալ -տի գեղանվանակերտ մասնիկն է՝ նույնական -տի հավաքականակերտ վերջածանցին (հմմտ. խաղտի-f, 'Aλαροδ-ու գեղանունների և մանկտի-f, փորտտի-f, բոլորտի-f բառերի համապատասխան բաղադրիչները)⁹⁶։ Այսպիսով,

⁹¹ Н. В. Арутюнян, Земледеление и скотоводство Урарту, стр. 142, 146—151։ Մերձկասպյան շրջանների բնակչության կյանքում ձիաբուծության և ձիու պաշտամունքի առանկարգ դերի վկաներն են Փրապապ տեղանունը, Ձառապ լեռանունը և զրադաշտական խոշոր ատրուշաններից մեկի Վշապ (Վշապն) անունը՝ իրենց ասպա, ասպ (ճճի) բաղադրիչներով։

⁹² Ն. Ադոնց, Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 240։ Կապուտանի ավանդանում ձիաբուծությանը զբաղվում էին հիմնականում իրանական (այստեղ հայտնված մ. թ. ա. XII—XI դդ.) և կիմերական ու սկյութական գեղերը (այստեղ ներխուժած մ. թ. ա. VIII—VII դդ.)։ Դրանց մասին տե՛ս Յ. Ա. Грантовский, О распространении иранских племен на территории Ирана, «История иранского государства и культуры», М., 1971, стр. 315—320։ Б. Б. Пиотровский, Ванское царство (Урарту), М., 1959, стр. 235։ И. М. Дьяконов, История Мидии, стр. 264—265.

⁹³ Strabo, XI, 7. 1.

⁹⁴ Н. Адонц, նշվ. աշխ., էջ 420։

⁹⁵ Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. Գ, էջ 117։ Գ. Բ. Զահուկյան, Հայերեն և հնդեվրոպական հին լեզուները, էջ 136։

⁹⁶ Н. Адонц, նշվ. աշխ., էջ 58—59։ Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. Գ, էջ 529—530։

ուտի (<*ովտի<*ովիտի<*Oυι-ti-) ցեղանունն ունի «ռչխարապահ, հովիվ» իմաստը⁹⁷:

* * *

Իմաստային փոխադարձ կապվածության (հակադրամիասնություն) մեջ գտնվող վերոբերյալ ցեղանունների հ.-ե. ստուգաբանությունները դրդում են մեզ նոր դիրքերից նայելու XVIII ստորապությունների բնակչության, մասնավորապես սասայերների էթնիկական պատկանելության հարցին: Սասայերների դեպքում, մեր կարծիքով, ոչ հիմնավոր պետք է համարվեն նրանց թե՛ խոսքիական ու վրացական, թե՛ սկյութական ծագում վերագրող տեսակետները: Ամենայն հավանականությամբ, սասայերական ցեղամիությունը ներկայացնում էր Ախուրյան գետի ավազանի և Արաքսի միջին հոսանքի շրջանի հայ-թրակյան այն բնիկներին, որի մեջ բնաշխարհիկ հայկական էթնիկական տարրի կողքին առկա էին նաև արևմուտքից եկած թրակա-պելասգյան և հյուսիսից եկած թրակա-կիմերական ծագմամբ ցեղեր⁹⁸: Ըստ այսմ, զարմանալի չէ, որ բերված հ.-ե. ծագմամբ հատուկ անունների մի մասն արձանագրել է հայերենի բուն հնդեվրոպական միջուկին, իսկ մյուս մասը՝ թրակա-պելասգյան լեզուներին հատուկ օրինաչափություններ: Փաստորեն տեղի հատուկ անունների բնագավառում տիրում է մի այնպիսի իրավիճակ, որը բնորոշ է նաև հայերենին ամբողջությամբ վերցրած: Վ. Գեորգիևը, օրինակ, հայերենում զանազանում է երկու լեզվաշերտ՝ փուլագա-հայկական և թրակա-միսիական⁹⁹: Գ. Բ. Զահուկյանը հայերենում առկա այն բառերի վերաբերյալ, որոնք ծագումով հ.-ե. են, բայց արձանագրել են հայերենի օրինաչափություններից շեղվող հնչյունափոխություններ, գրում է. «...իսկին հնարավոր է, որ հայերենում պահպանված հնդեվրոպական շատ արմատներ, որոնք անմիջապես չեն զալիս հնդեվրոպական լեզվից և հայերենի բուն հնդեվրոպական միջուկին չեն պատկանում, ունեն հայաստանի և թրակյան ծագում: Նշանակում է՝ մեր «Очерки по истории дописменного периода армянского языка» գրքի մեջ (Երևան, 1967) առանձնացված հնդեվրոպական այն բառերի մի մասը, որոնք շեղվում են բուն հայերենի հնչյունական օրինաչափություններից, պետք է բացատրվի որպես հայաստանի և, թերևս, որպես թրակյան»¹⁰⁰:

Այսպիսով, համադրելով XVIII ստորապության բնակչության վերաբերյալ Հերոդոտի, Ստրաբոնի և Մովսես Խորենացու հաղորդած տեղեկությունները և հիմք ընդունելով հետագա Այրարատում ու նրան հարող շրջաններում հացազգիների մշակության և պաշտամունքի ոլորտից եկող հատուկ անուն-

⁹⁷ *Oυι-ti > *ովի-տի > *ովտի > ուտի անցումները՝ հայերենին բնորոշ առաջին ի-ի անկումով և ով > ու փոխակերպությամբ (իսկ ու = ու + ի), վկայում են, որ ցեղանունը ուտի-Ի (> Ուտի-բ) է դարձել հայերենի հողի վրա:

⁹⁸ Ստրաբոնը, ինչ-որ հին աղբյուրներից ելնելով, սարապարներին ուղղակի թրակացիներ է կոչում (Strabo, XI, 14, 14):

⁹⁹ В. Георгиев, Тракийский язык, София, 1957, стр. 77—83. Ն ու լ յ ն ի՝ Исследования по сравнительно-историческому языкознанию, стр. 143.

¹⁰⁰ Գ. Բ. Զահուկյան, Հայաստանի լեզվի հին անատոլիական ծագման վարկածը, Պատմա-բանասիրական հանգես, 1976, № 1, էջ 108:

ների հնդեվրոպական (հայկական և թրակա-պելասգյան) ստուգաբանությունները, մենք հնարավոր ենք գտնում հյուսիս-արևելյան Հայաստանի նշված հատվածում մ. թ. ա. VI—V դդ. գոյություն ունեցած սասպեյրների (կամ սարապարների՝ «Շարայի զարմերի») ցեղամիությունը համարելու բնաշխարհիկ հայկական և եվեոր թրակյան էթնիկական տարրերի համակեցության արդյունք։ Այս համակեցության մասին է խոսում այն փաստը, որ «Շարայի ցեղամիության» տարածքից հայտնի և ստուգաբանության ենթարկվող հնագույն (ուրարտական ժամանակներից սկսած) հատուկ անունները՝ անձնանուններ, դիցանուններ, ցեղանուններ, տեղանուններ, գետանուններ, լճանուններ, լեռնանուններ, իրենց մեծամասնությամբ ունեն բուն հայկական և թրակյան ծագում¹⁰¹, Հատկապես վերջիններիս առիթով տեղին է հիշել Վ. Գեորգիևի այն տողերը, թե «...աշխարհագրական անվանումների հետազոտության հիման վրա կարելի է թանկարժեք հետևություններ անել տվյալ շրջանի հնագույն բնակչության լեզվական պատկանելության վերաբերյալ»¹⁰²։

«Շարայի զարմերի» (սարապարների) կամ սասպեյրների ցեղամիության ներսում տեղ գտած հայ-թրակյան համակեցություն, ի վերջո, հանգեցրեց «մերալնացեալ» փոքրամիակ եվեորների կատարյալ տարալուծմանը հայերենակիր էթնիկական տարրի գերակշիռ զանգվածի մեջ։ Ըստ այսմ էլ Շարան՝ «Շարայի ցեղամիության» էպոնիմ-նախնին հին հայկական ավանդադրույցներում դասված է Հայկի՝ հայության ընդհանուր էպոնիմ-նախնու (էթնարխ) սերունդների շարքը¹⁰³։ Այս առթիվ հիշենք նաև, որ մ. թ. ա. II դարի Հայաստանի բնակչությունը Ստրաբոնը բնութագրում է «միալեզու» (ὁμόγλωττος) բառով¹⁰⁴։ Իսկ այդ ժամանակաշրջանի Հայաստանը՝ Արտաշիսյան Մեծ Հայքը, ներառում էր նաև նախկին «Շարայի ցեղամիության» ամբողջ տարածքը, որն արդեն նախորդ դարերում ընդգրկված էր Երվանդունիների Այրարատյան թագավորության մեջ։ Ի դեպ, այդ պատմական իրողությունն է արտացոլում հին հայկական ավանդադրույցների «Արմավիրյան շարքը»՝ Շարայի ծնունդը դնելով Արմավիրում՝ Երվանդունիների Այրարատյան թագավորության մայրաքաղաքում¹⁰⁵։

¹⁰¹ Դրանց մի մասի վերաբերյալ տե՛ս Ս. Գ. Պետրոսյան, Թրակա-կիմերական ցեղերի միությունները Հայկական լեռնաշխարհում, էջ 209, 212—216։ Նույն ի, Հին թրակյան էթնիկական տարրը հնագույն Վանանդում, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.», 1977, № 8, էջ 33, 36—39։ Նույն ի՝ «Շարայի ցեղամիությունը» Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելքում, էջ 68—73։

¹⁰² В. И. Георгиев, Исследования по сравнительно-историческому языкознанию, стр. 253.

¹⁰³ Խորենացի, Ա, ԺԲ։

¹⁰⁴ Strabo, XI, 14, 5.

¹⁰⁵ Խորենացի, Ա, ԺԲ։

ОТРАЖЕНИЕ КУЛЬТИВИРОВАНИЯ И КУЛЬТА ЗЕРНОВЫХ В СКАЗАНИИ О ШАРА

Кандидат историч. наук С. Г. ПЕТРОСЯН

(Резюме)

По древнеармянским эпическим сказаниям Шара—эпоним древнейших жителей Ширака и сопредельных районов, т. е. сарапаров Страбона (Σαραπαρῆς <*šara-par-). Имя Šara одного происхождения не только с этнонимом šagara- и топонимом Ašar-uni-k'/Ašor-ni-k', но и с арм. ašara/ašoga, означающим разные виды зерновых. Из того же хозяйственно-культурного круга и из того же региона происходят этноним sasreug- (Σαῤῥεῖρες, Σαῤῥεῖροι) и топоним Ayarat. Первый состоит из компонентов sas- (ср. др.-инд. sasya «зерно, сев») и -reug (<и.-е. *рег- «рождать, производить» или *рег- «сын, мальчик»). В основе второго лежит незасвидетельствованный в источниках этноним agray- (<и.-е. *arə-ter «пахарь»): *Agray-at > Ayarat. Приведенные этнонимы, обозначающие общность оседлых земледельцев, являются антитезой этнонимам для кочевых скотоводов: matian- (Ματιανοί, Ματιηνοί) <и.-е. *mendī- «лошадь, конь» и oulti- (Οὐλίται) <и.-е. *oui- «овца».